

Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանը մասնակցել է Խաղաղապահի միջազգային օրվան նվիրված հանդիսավոր արարողությանը

30.05.2023

Մայիսի 29-ին Կոտայքի մարզպետ Ահարոն Սահակյանը ՀՀ ԶՈՒ ԳՇ պետ, պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, գեներալ-մայոր Էդվարդ Ասրյանի, ՀՀ պաշտպանության նախարարության և ԶՈՒ ԳՇ բարձրաստիճան ներկայացուցիչների հետ ՊՆ խաղաղապահ ուժերի բրիգադում մասնակցել է Խաղաղապահի միջազգային օրվան նվիրված հանդիսավոր արարողությանը:

Էդվարդ Ասրյանն իր և ՀՀ ՊՆ նախարարի անունից շնորհավորել է բրիգադի զինծառայողներին մասնագիտական տոնի կապակցությամբ և շնորհակալություն հայտնել իրենց ծառայությունն ու առաքելությունը բարեխղճորեն կատարելու համար:

Բարձր գնահատելով խաղաղապահների պատրաստությունը՝ Էդվարդ Ասրյանն ընդգծել է, որ քաջ գիտակցելով խաղաղության արժեքը՝ հայ զինծառայողները պատվով են իրականացնում առաջադրված խնդիրները՝ կարևոր ներդրում ունենալով միջազգային անվտանգության և խաղաղության ապահովման գործում: Հանդիսավոր արարողության ավարտին խաղաղապահ բրիգադի մի շարք զինծառայողներ պարգևատրվել են գերատեսչական մեդալներով, արժեքավոր նվերներով և պատվոգրերով: